

անտանելի սառն բնակութիւն և յառաջուց քերթելով ինձանից տարեկան վարձը 400 ման. և հազար անդամ ասանմա, թէ քո հնոցը անպիտան են, ծխոտ են, տաքութիւն չունին. նա անհոգ ու անփոյթ է: Այսպիսի խարերայ, անխիղճ մարդիկ ևս տեսած չեմ, որպիսի տեսանումնմ թիֆլիզում, ամենասակաւ բացառութեամբ:

Եւ թիֆլիզի փորձը առանք. ճոխացանք գիտութեամբ, որ տակաւին պակաս էին ինձ: Տեսանք մեր չտեսածները և արդարեն իմաստնացանք, միայն թէ ծանրածանը զրկանքներով և զոհելով կեանքի խաղաղութիւնը: Մեք մտանք ծովի մէջ, միւսերը կանգնած էին ի սկզբանէ և են այժմ իսկ ծովի ափումը. մեք գիտենք կեանքի փոթորիկները. միայն թէ գիտենք, բայց միւսերին օգնել կարող չենք, և այդպէս, ինչպէս երեսումէ, պիտի մնուանինք:

Հնգունիր սիրալից ողջոյնը և յարգութիւնը իմ՝ գերգաստանի, որ մի յառաջ ցանկանում էր գրկախառնել զձեզ, և ողջ եղիք վասն:

Քո զ՞եզ սիրող և յարգող բարեկամի
Ս. Նազարեանց.

— 282 —

Հ Ե Ր Ո Վ Դ Դ Ի Ա Դ Ա *

(Գուստաւ Փլօքերի)

II.

Ժողովուրդը բռնել էր ամրոցի պարիսպները, երբ Բիթելիոսը մտաւ բակը: Նա յենուել էր թարգմանի ձեռքին. Նրա յետեկից բերում էին մեծ, զեղեցիկ պատգարակ, զարդարուած հայելիներով ու փետուրներով. Բիթելիոսի վերայ կար սենատորի թիկնոցը, հագել էր կոնսուլի կօշիկները. ծառաները շրջապատել էին նորան:

Նոքա գոների առաջ ցցել էին իրենց տասներկու կապ ճիպոտները, կապոտած թոկերով, իսկ ճիպոտների մէջ տեղում դրած էր կացին. ամենքին երկիւղը պատեց տեսնելով հոռվմէական ժողովրդի մեծութեան այս նշանները:

Պատգարակը, որ տանում էին ութն մարդ, կանգնեց: Նրանից իջաւ մի պատանի մեծ փորով, կարմիր բշտիկներով ծածկուած երեսով և մարգարտեայ մատանիներ շարած մատների վերայ: Նրան տուին մի դաւաթ գինի և քաղցր խմորեղէն: Նա ցամաքեցրեց այն և պահանջեց երկրորդը:

*) Տես սոյն թիւ օգոստոսի համարը:

Տետրարիսը ծունկի եկաւ պրօկոնսուլի առաջ: Դժբաղդաբար նա առաջուց չգիտէր, որ Բիթելիոսը պատիւ կանի իրեն իւր այցելութեամբ: Ապա թէ ոչ նա կհրամայէր ճանապարհին պատրաստել ամեն բան, ինչ որ արժանի էր Բիթելիոսներին: Նոքա սիրուած են Բիթելիա աստուածունուց: Ճանապարհը Եանիկուլից դէպի ծովը նորա անունն է կրում: Նոցա ընտանիքում քվեստորների և կոնսուլների թիւ ու համարը չկայ: Ինչ վերաբերում է Լիցիոսին, որն այժմ նրա հիւրն է, ապա նա արժանացել է Ընդհանուր շնորհակալութեան, որպէս կղիաների յաղթող և հայր երիտասարդ Արդոսի, որի մասին կարելի է ասել, որ նա վերադառնում է իր տիրապետութիւնը, որովհետև Արևելքը աստուածների հայրենիքն է եղել: Այս վեհաշուք փքուն գովասանքները արտասանուեցին լատիներէն: Բիթելիոսը սառնութեամբ լսեց այս:

Նա պատասխանեց, որ Մեծն Հերովդէս հոչակեց իւր ցեղը: Աթենացիք նրան պատուեցին ողիմպիական խաղերի ղեկավար կարգելով: Նա ի պատիւ Օգոստոսի տաճար կանգնեց, աչքի էր Ընկնում հնարագիտութեամբ և համբերութեամբ, սպառնալիք էր թշնամիների և երբէք չդաւաճանեց կեսարներին:

Բրոնզեայ կամրակապ սիւների միջից երևաց Հերովդիադան: Նա գնում էր թագուհու նազանքով, շրջապատուած կանանցով և ներքինիներով, որոնք տանում էին ուկեզօծ սկուտղներ ծխացող անուշահոտութեամբ:

Պրօկոնսուլը երեք քայլ առաջ գնաց դէպի նա:

— Ինչպիսի բաղդաւորութիւն, բացականչեց Հերովդիադան, որ Տիբերիոսի թշնամի Ագրիպան այսուհետև զրկուած է կայսեր վնասելու հնարաւորութիւնից:

Բիթելիոսը կատարուածի մասին ոչինչ չգիտէր և վախեցաւ մի բան ասել նրան և երբ Անտիպան սկսեց երդուել, որ պատրաստ է ամեն բան անել կայսեր համար, նա նկատեց:

— Մինչեւ անզամ ի վնաս ուրիշների:

Բիթելիոսը մի անզամ Պարթևացոց թագաւորից պատանդներ էր ստացել, բայց կայսրը նրան թողել էր առանց պարզմի, որովհետև Անտիպան, որ ներկայ էր խորհրդակցութեան, ցանկանալով ծառայութիւն մատուցանել, անմիջապէս այդ լուրը տանող սուրհանդակ էր ուղարկել Հռովմ: Պրօկոնսուլը խոր ատելութիւն էր պահում դէպի Տետրարիսը, դրա համար էլ նա այդպէս ուշացըց իւր օգնութիւնը:

Տետրարին ինչ որ անհասկանալի բան վնթինթաց: Բայց Արդոսը ծիծաղելով ասաց: — Հանգստացիր, ես քո հովանաւորն եմ:

Պրօկոնսուլը ձեւացրեց թէ չի լսում: Հօր բաղդաւորութիւնը որդու անառակութիւնից էր կախուած, բայց այս ծաղիկը, որ

ձլել էր Կուպրէայի ցեղից, նրան տուեց այնպիսի զարմանալի օգուտներ, որ նա նրա վերայ զարձրեց իւր ամբողջ ուշադրութիւնը, թէև նրան չէր վստահանում, որովհետեւ նրա մէջ թագնուած էր թոյն:

Դաներում սկսուեց իրարանցումն, բայն էին մանում, մի շաբթ սպիտակ ջորիներ, որոնց վերայ մարդիկ էին նստած, հազնուած ինչպէս քահանաները: Սոքա սադուեկեցիներն ու փարիսեցիներն էին, թէ մէկը և թէ միւսը Մարիսերուու էին եկել միանման ցանկութեամբ, առաջինները կամենում էին զահարերութեան իրաւունք ստանալ, երկրորդները՝ պահպանել այն: Նոցա գէմքերը խոժու էին, մանաւանդ փարիսեցիներինը—Հոռովմի և Տետրարիսի երդուեալ թշնամիներինը: Նոցա երկար հազուստների քզանցքները խանգարում էին նոցա ամբոխի մէջ շարժուել, նոցա ճակատի վրայ մազաղաթեայ ժապաւէններ էին կապած, որոնց վերայ զբած էին օրէնքներ, իսկ զագաթի վերայ օրօրւում էր սաղաւարութ:

Նոցա յետեկց եկան առաջապահ զօրքերը, Նոքա իրանց վահանների վերայ հազցըրել էին տոպրակներ փոշուց պահպանելու համար: Յետեկց գնում էր Մարցիւլ, պրօկրնսուլի փոխանորդը, ուղեկցութեամբ հարկահաւաքների, որոնք կոնատակին ունէին փայտեայ տախատակներ:

Անտիպան պրօկրնսուլին և նրա որդուն ներկայացրեց իւր մերձաւորներին, Տօլմային, Կանտերին, Սէռնին, Ալէքսանդրիացի Ամմանիային, որ իր համար ասֆալտ էր գնում, թոռոցիկ զնդի հրամանադար Նասմանին և բարելոնացի Եսասիմին:

Բիթելիոսը արդէն առաջուց նկատել էր Մաննային:

— Իսկ սա մի է:

Տետրարիսը նշաններով հասկացրեց, որ սա զահիճ է:

Ապա նա ներկայացրեց սադուեկեցիներին:

Յովնաթանը, կարճահասակ, յանդուզն շարժումներով, յունարէն սկսեց խնդրել պրօկրնսուլից պատուել իրենց Երուսաղէմի այցելով: Նա պատասխանեց, որ հաւանականարար այնտեղ կզայ: Եղիազարը, արծուաքթով և երկար մօրուքով, փարիսեցիների անունից պահանջեց, վերադարձնել քահանայապետի վերարկուն, որ քաղաքական իշխանութիւնը պահել էր Անտոնիոսի աշտարակի մէջ:

Ապա Գալիլիացիները խնդիր մատուցին պոնտացի Պիղատոսի դէմ, որը հրամայել է սպանել մի քանի մարդիկ այն պատրուակով, որ մի ինչ որ խելագար Մամարիայի մօտ քարայրում փընտուելիս է եղել Դաւիթ թագաւորի ուկիայ թասը: Եւ բոլորն աղաղակում էին իրար առաջ կտրելով,— Մաննային միւսներից աւելի բարձր, Բիթելիոսը խոստացաւ պատճել յանցաւորներին:

Յանկարծ անասելի աղաղակ բարձրացաւ սրահներից մէկի առաջ, ուր զինուորները կախել էին իրանց վահանները, ծածկոցները վահանների վրայից հանուած էին, և հրէաները տեսնում էին նրանց իւրաքանչիւրի մէջ տեղում կեսարի պատկերը. սա թւում էր նոցա կոսալաշառութիւն։ Անտիպան համոզում էր նոցա հանգստանալ, մինչդեռ Բիթելիոսը զիտում էր նոցա իւր բարձր աթուից, որ դրուած էր սիւնաղարդ սրահում, զարմացած նոցա կատաղութեամբ և արդարացնելով Տիրերիոսին, որ չորս հարիւր հրէայ աքսորեց Սարդինիա։ Բայց այստեղ իրանց տանը նորա ուժեղ էին և հրամայից վերցնել վահանները։

Այս ժամանակ նորա մօտեցան պրօկոնուլին, ոմանք աղաղակում էին պաշտպանել իրենց անարդարութիւնից, ուրիշները խնդրում էին իրենց համար առանձին արտօնութիւններ, երբորդները ողորմութիւն էին աղերսում։ Նորա պատաստում էին իրանց շուրերը, սկսուեց իրարանցումն, և ստրուկները ճեծում էին աջու ձախ, որպէսզի հեռացնեն նոցա Բիթելիոսի մօտից։ Դոների մօտ կանգնածները իշնում էին նեղ ճանապարհով, ուրիշները բարձրանում էին վել, զոյացաւ երկու հոսանք, որոնք շարժում էին իրար, հանդէպ և այս ամբողջ մասսան օրորում էր նոցա սկզբող պատերի մէջ։

Բիթելիոսը հարցրեց ժողովրդի այդպիսի համախմբման պատճուը։ Անտիպան բացատրեց, որ խնջոյք է սարքում իւր ծննդեան առթիւ և ցոյց տուեց սարուկների վերայ, որոնք կուտացած սպանդանոցների վերայ դուրս էին քաշում մսով, պտուղներով, կանաչնեղիններով, վայրի այծերով, արագիլներով և կապտագոյն տափակ ձկներով լի ահազին կրղովներ, խաղողով, ձմերուկներով և նոներով լի զամբիւղները զարսած էին բուրգի նման։ Արդուը չգիմացաւ և ոլացաւ դէպի խոհանոց, որկրամոլութեամբ տարուած, որն իւր շատակերութեամբ յետոյ զարմացրեց ամբողջ աշխարհին։

Նկուղի մօտից անցնելիս նա նկատեց եռոտանիների վերայ դրուած կաթսաներ՝ ահազին մեծութեան։ Բիթելիոսը զնաց նրա յետեկից նայելու և պահանջեց, որ իրեն ցոյց տան ամբոցի գետնայարկերը

Նորա փորուած էին ժայռի մէջ, նոցա բարձր կամարները յինուած էին սիւների վերայ, որոնք կանգնած էին իրարից որոշ հեռաւորութեամբ։ Առաջնում գտնուում էր զինապահնեսար, երկրորդը՝ նիզականոցն էր, որոնց սուր ծայրերը ցցուած էին փետուրի փունջերի նման երրորդը կարծես ծածկուած էր եղէդնի ճիպուներից հիւսած փսխամներով, այնքան մեծ քանակութեամբ բարակ նետերը բռնել էին նորա պատերը։ Զորքորդի պատերից կախուած էին լայն թրեր, չինդելորդի մէջ տեղում ծգուում էին

սաղաւարտների շարքեր, կատարներով, կարծես կարմիր օձերի դօրագունդ լինէին, վեցերորդում գտնուում էին կապարճներ, հօթերորդում՝ զանգապաններ, ութերորդում՝ ձեռքի շղթաներ, կեռեր, եղանակներ, սանդուխքներ, պարանները լցրել էին յաջորդ գետնայարկը, այնտեղ կարելի էր գտնել նոյն իսկ կայմեր բարանների համար և բոժոժները ուղարկել համար:

Եւ որովհետեւ սարը ներքեւ իշնելով լայնանում էր, ուստի այս ներքնայտրկերի տակ, ինչպէս փեթակի բջիջներ, ընկած էին ուրիշները՝ աւելի բազմաթիւ:

Բիթելիոսը, թարգման Փինէյը, հարկաժողովների գլխաւոր Սիզեննան անցնուում էին նրանց միջով կերպնների լուսով, որ տառում էին երեք ներքինիներ:

Կիսախաւարում երեսում էին բարբարունների հրէշաւոր ստեղծագործութիւնները, մեխերով ծածկուած դադանակներ, թունաւորուած տէզեր, կոկորդիլոսի ծնօտների նման աքցաններ:

Ի նկատի ունենալով, որ թշնամինները կարող էին դաշն կապել իւր դէմ, ուստի Տեարարխը ժողովել էր Մարիսերուսում քառասուն հազար մարդու սպառազինելու պատրաստութիւն: Բայց պրօկոննառուլը կարող էր մտածել կամ տեղեկագրել, որ Հերովդէսը թշնամական միտունմեր ունի դէպի հուզմայեցինները ուստի Անտիպան աշխատում էր ցըրել նրա կասկածը:

Այս զէնքերը ինքը չի պատրաստել, այս բոլորը իւր հօրից է մնացել, նրա մեծ մասը ծառայում է պաշտպանութեան համար աւազակներից և բացի այդ, դոքա պէտք էին արարների դէմ պատերազմելու համար: Փոխանակ պրօկոննառուլի յետնից զնալու, Անտիպան վազեց առաջ, յանկարծ նա յենուեց պատին աշխատելով ծածկել այն իւր թիկնոցով, որ բաց արեց արմունկներով: բայց նրա գլխավերեկից երեսում էր դրան վերին մասը: Բիթելիոսը նկատեց այն և կամեցաւ իմանալ, ինչ կայ նրա յետնում:

— Այս դուռը միայն բարելոնացին կարող է բանալ:

— Կանչել բարելոնացուն:

Սպասեցին նրան:

Եասիմի հայրը եկել էր Եփրատի ափերից հինգ հարիւր ձիաւորներով և առաջարկում էր Մեծն Հերովդէսին պաշտպանել նրա տիրապետութեան արևելեան սահմանները: Թագաւորութեան բաժանումից յետոյ Եասիմը մնաց Փիլիպպոսի մօտ, իսկ այժմ ծառայում էր Անտիպային:

Վերջապէս նա եկաւ աղեղը ուսին ձգած և խարազանը ձեռքին, Գոյսզգոյն թելերով ամուր փաթաթած էին նրա ծուռտիկ ուսները: Առանց թեսերի թիկնոցն, ազատ էր թողել ջուտ ձեռքերը: Մորթէ գրակը ստուեր էր կցել նրա դէմքի վերայ.

Սկզբում կարծես նա չհասկացաւ թարգմանին: Բայց Բիթելիոսը նայեց Անտիպային, և նա անմիջապէս կրկնեց հրամանը և ին ժամանակ եամիմը ձեռքը դրեց դրան վերայ և սա սահեց պատի մէջ:

Նոցա երեսին խփեց տաք օղը: Մութ, ողորապտոյտ նախաս սենեակը տանում էր դէպի ցած, նոքա սկսեցին իշնել և հասան այրի շէմքին, որն աւելի ընդարձակ էր քան մնացածները:

Նրա խորքում, կամարի տակը, երեում էր բացուածք անդունքի վերայ, որը այդ կողմից պաշտպանում էր ամբոցը: Պատառուկի ծաղիկները, որոնք կաել էին կամարին, կախկխուած էին դէպի դուրս և լողում էին արեի լոյսի մէջ: Գետնի վերայ քչը չում էր առուակը:

Այս այրում գտնուում էին մօտ հարիւր սպիտակ ձիեր. նոքա դարի էին ուտում նոցա դնչի հաւասարութեամբ կրպած մուրը մէջ: Նոցա բաշը ներկած էր կապոյտով, սմբակները պաշտպանուած էին հիւսած տոպրակներով, նոցա ճակատի փունչ մաղերը բարձրանում էին վեր կեղծ ծամերի նման, նոքա շարժում էին իրանց երկար պոչը: Պրօկոնսուլն ապշել էր սթանչացումից:

Սքանչելի կենդանիներ էին, ճկուն ինչպէս օձ, թեթև ինչպէս թոշուն: Խոքա թոշող նետից յետ չեին մնալ, նոքա վայր էին դցում մարդկանց, կծում էին նրանց փորից, բարձրանում էին լարիրինթոսից դէպի ժայռերը, ցատկում էին անդունդի վրայից և կարող էին օրերով կատաղարար վագել հարթ տեղերում, բաւական էր մի խօսք ասել և նոքա կանգնում էին: Հենց որ եաւսիմը մտաւ, նոքա վագեցին նորա մօտ, ինչպէս ոչխարները հովուի մօտ և երկարացնելով վզերը նայում էին իրանց մանկական աշքերով, ականջները սրած: Հստ սովորութեան նա խոպոտ ձայնով նոցա ինչ որ ասաց և նոքա սկսեցին դուարձանալ, ծառ վնել աղատութեան և ցատկտելու բուն ցանկութեամբ:

Անտիպան վախենալով որ Բիթելիոսը կարող է այդ ձիերն իրենից խել, փակել էր այս քարայրում, որ շինուած էր կենդանիների համար բերդի պաշարման ժամանակ:

— Ախուն ինձ դսոր չի գալիս, ասաց Պրօկոնսուլը, և դու կարող ես նոցա կորցնել: Միգեննա, սոցա զրիր:

Հարկաժողովը գոտիից հանեց տախտակը, համարեց ձիերն ու գրեց:

Հասարակութեան գործակալները, որոնք կապալով էին վերցնում հարկերի ժողովելը, կողոպտում էին գաւառները, կառավարիչներին կաշառ տալով. և սա էլ ամեն տեղ կզաքիսի նման հոտոտում էր իւր դնչով և թարթող աշքերով:

Կերչապէս նոքա կրկն սկսեցին դէպի բակը բարձրանալ:

Մի քանի տեղերում երևում էին կոլոլ բրոնզեայ տախտակներ, որ ծածկում էին ջրհորները, Սիզեննան նկատեց, որ նրանցից մէկը մրւաներից մեծ է և այնպէս չէր ձախ հանում, ինչպէս մրւաները, երբ նրանց վրայով անցնում էին: Նա անցաւ բոլոր տախտակների վրայից և յանկարծ ռաքով խփելով գոռաց:

— Ահա, ահա Հերսվդէսի գանձը:

Հոռվմայեցիները այս գանձերի խենթերն էին:

Տետրարիմը երկուեց, որ ինքը գանձ չունի:

— Ուրեմն ինչ է այս տախտակի տակ:

— Ոչինչ. մի մարդ... բանտարկեալ:

— Ցոյց տուր նրան, ասաց Բիթելիոնը:

Տետրարիմը չհնազանդուեց, նրէաները կիմանային նրա գաղտնիքը: Սա զրկուեց նրան առաջին առաջակացաւ մասին:

— Հանել տախտակը, զոռաց նա ծառաներին:

Մանային հասկացաւ թէ ինչք մասին է խօսքը: Տեսնելով կացինները, նա մտածեց որ ուզում են Յովլաքանանին գլխատել և կանգնեցնելով ծառային, որ ուզում էր հարուածել տախտակին, ինչ որ մի կէս մտցրից տախտակի և քարերի արանքը, որոնցով բակը մայթած էր, ապա լարելով իր երկար, նիհար ձեռքերը զգուշութեամբ բարձրացրեց տախտակը. թաւալեց այն. բոլորը զարմացան նրա ուժի վերայ: Բրոնզեայ ծածկոցի տակ գտնուում էր նոյնպիսի փայտեայ տախտակ: Մանային բոռնցքով խփեց նրան, նա բացուեց, նրանց առաջ երևաց անցք և ահագին փու, ուր իջում էր պատուակածել առանց ճաղերի սանդուխք և նա, ով կունում էր դէպի այդ փոսը, տեսնում էր յատակի վերայ ինչ որ մոայլ և սոսկալի բան:

Գիհանի վիրայ պառկած էր մի մարդ, հիւծած երկար մազերը խահնուած ուզափ բրդի հետ ծածկում էին նրան: Նա կանգնեց, նրա ճակատը կպչում էր յանկապատին, որ պատի մէջ էր փորուած, նա մէկ երևում էր, մէկ անյայտանում այրի խորքում:

Սաղաւարտների սրածայր գագաթները և սրերի երախտակալները փայլում էին արկի առաջ, նրա ճառագայթները տաքացնում էին տախտակները. աղաւնիների երամները թոչելով ամբոցի պատերի դուրս ցցուած մասերի վրայից սաւառնում էին քակի վրայ, այդ ժամանակ Մաննային նոցա կերակրում էր հատիկներով: Նա ծալապատիկ նստած էր Տետրարիի առաջ որ կանգնած էր Բիթելիոսի կողքին: Գալիի խացիները, քահանաները, զինուորները խըմբուել էին շուրջը և բոլորը յոզնեցուցիչ սպասողութեամբ լոել էին: Նախ լսուեց իորը հառաջ, կարծես գերեզմանից դուրս թռած:

Հերովդիադան այն լսեց արքունիքի միւս ծայրում, կարծես ինչ որ ոգիի ազդեցութեամբ նա անցաւ ամբոխի միջից և ձեռքը

գնելով Մաննայի ուսին սկսեց ականջ դնել, ամբողջ մարմառով առաջ ընկած:

— Վայ ձեզ, փարիսեցիներ և սաղուկեցիներ, իժերի ծնունդ, վիչած տէիր, դողանջող ծնծղաներ:

Ճանաչեցին Յովաքանաննի ճայնը, նրա անունը բոլորի բերանունն էր. ժողովուրդն սկսեց խոնուել:

— Վայ քեզ, ժողովուրդ, վայ ձեզ, Յովայի ցեղի դաւաճաններ, Եփրեմի արքեցողներ, վայ բոլորին, որոնք ապրում են մոայլ հովտում և օրօրւում են գինուց, թող նոքա ոչնչանան ինչպէս ցամաքող աղբիւր, ինչպէս դաշտում սողացող խիտւնջներ, ինչպէս կնոջ ընկեցիկներ, որոնք չեն տեսնում արել: Եւ դու Մովաբ, պիտի թագնուես նօճիների ճիւղերի տակ, ինչպէս ճնճղուկներ, թագնուես քարայրերում, ինչպէս չշղիկներ: Ինչպէս ընկուղի կեղև կիշրուեն ամրոցի գաները և մոխիր կղառնան քաղաքները. Տիրոջ խարագանը ոչ ոքի չի խնայի: Ամենաբարձրեալը ձեր ուսերը կծածկի ձեր արիւնով, նման ներկարարի, որ բուրդը ներկում է ամանի մէջ: Ինչպէս նոր ցարան նա կպատառուի ձեզ: Նա լեռների վերայ ցրիւ կտայ ձեր մարմաք կտորտանքը:

Ո՞ր յաղթանակողի մասին է խօսում նա, զաւցէ Բիթելիոսի՞, Միայն հոռվմայեցիները կարող էին այդպիսի աւերածութիւն գործել: Հնչեցին զայրացկոտ աղաղակներ, բաւական է, բաւական է, ստիպեցէք սրան լսել:

Բայց Յովաքանաննը շարունակեց ճայնը բարձրացնելով.

— Մանը երեխաները կսովան մոխիրների վրայ իրանց մայրերի զիակների շուրջը: Սուրը ձեռքին գիշերները գուրս կզանորսի աւերակների մէջ, Բորենիները կլուեն իրար բերանից մեռածների ոսկերոտիքը հրապարակների վերայ, ուր մի ժամանակ երեկոյեանները զրուցում էին ծերունիները: Արտասուրը կուտալով աղջիկներ կզուարձացնեն օտարականների խնջոյքներում կիթառի վերայ նուագելով, և քո զաւակներից ամենակարիճները կճկեն իրանց պարանոցը անյարմար բեռան տակ:

Խոնուած ժողովուրդը յիշեց աքսորանքի օրերը, իւր պատմութեան բոլոր դժբաղդութիւնները: Ինչպէս ասում էին հին մարդարէները: Յովաքանաննի խօսքերը նման էին հզօր հարուածների, որ նա մէկը միւսի յետերից հասցնում էր:

Բայց յանկարծ նրա ճայնը հնչեց ներդաշնակ, քնքոյշ և քաղցր: Նա աւետեց ազատութիւնը, կապոյտ երկինքը, մանկան ծնունդը վիշապի այրում, խօսում էր այն օրերի մասին, երբ ու կին կփոխարինի կաւին և անապատը կիբթթի ինչպէս վարդ:

Այն ինչ որ այժմ արժէ վաթսուն կիկկար, գահեկանից աւելի աժան կլինի: Գետերը մեղը ու կաթ կհոսին, գինովցած կընանան:

հնձաններում, երբ կդաս դու, որին ևս սպասում եմ: Տողոր ժողովուրդները արդէն ծունը են չոքում և Քո թագաւորութիւնը անվախճան կլինի, Որդի Դաւթի:

Տետրարխը յետ յետ գնաց, Դաւթի Որդու մասին յիշելը վիրաւորեց նրան որպէս սպասնալիք:

Յովաքանաննը սկսեց խարազանել Հերովդէսին սրա արքայական տիտղոսի մասին:

— Զկայ ուրիշ թագաւոր, բացի Նախայաւիտեանից:

Նա հարուածում էր նրան ինչպէս դժբաղդ Աքարին, նրա այգիների, արձանների, փղոսկրեայ զարդարանկների համար:

Անտիպան կտրեց թելը, որից կախուած էր կրծքին կնիքը, գցեց փոսի մէջ հրամայելով լոել:

— Ես պէտք է գոռամ ինչպէս արջ, ինչպէս վայրի էշ, ինչպէս ծնղկան, պատիժն արդէն քեզ հասել է, իբրև արիւնապղծի: Աստուած պատժել է քեզ որպէս ամուլ ջորի:

Բարձր ծիծաղը ալիքի ծլպոցի նման անցաւ ամբոխի մէջ:

Բիթելիոսը չէր կամենում հեռանալ: Թարգմաննը ամենայն ճշութեամբ լատիներէն էր թարգմանում բոլոր վիրաւորանքները, որ Յովաքանաննը հասցնում էր բոլորին իւր բարբառով: Տետրարխն ու Հերովդիադան այդ սախուած էին լսել երկու անդամ, Հերովդէսը փեղբուում էր, մինչդեռ Հերովդիադան բերանարաց, չուծ աչքերով նայում էր դէպի ջրհորի խորքը:

Այս սարսափելի մարդը յետ գցած գլուխը և ցանկապատը բռնած մօտեցրեց նրան իւր զէմքը, որ նման էր մացափի, որի մէջ փայլում էին զոյգ շիկացած ածուխներ:

— Ա, այդ դու ես, Ցեղարէլ, դու լցրի ես նրա սիրաը քո սանդալների ճաճուցով! Դու խրխնջում էիր, որպէս մատակ ձի, դու առազաւող բարձրացրիր լեռների կատարները, որ քո զոհաբերութիւններն անես Տէրը դուրս կպոկի քո ականջի օղերը, կպատառուի վրայիցդ ծիրանի զգեստդ, և վուշիայ ծածկոցդ, մատանիները քո մատներից և ապարանջանները քո ոտներից, կպոկի ոսկեայ կիսարուսինները, որոնք կախուած են ճակատիդ վրայի: Նա կիսի քեզանից արծաթեայ հայելիները, ջայլամի փետուրներից հովհարդ, սատափէ տակերով սանդալներդ, որը դու հագնում ես, որ բարձր երեաս, քո շքեղ աղամանզներդ, անուշահոտութիւններդ, որով դու օծում ես քո մազերը, եղունզներիդ համար գործածուող ներկերը, քո զգուանքի բոլոր խորամանկութիւնները և անառակին քարկոծելու համար քարերը բաւական չեն լինիլ:

Հերովդիադան շուրջը նայեց պաշտպանութիւն վնատուելով փարիսիցիները կեղծաւորաբար յառել էին աչքերը, սադուկեցի-

Ները շըջեցին երեսները, վախենալով վիրաւորել Պրօկռնսուլինտ Անտիպան նման էր մեռածի:

Իսկ ձայնը դեռ բարձրանում էր, նա հնչում էր Մարին բուսի վերայ ինչպէս ամպրոպային որոտ, հարուածում էր նրան ինչպէս կայծակ, նորա հաղարաւոր արձագանքը լսւում էր լեռների մէջ:

—Թաւալիր փոշու մէջ դուստր Բաթելոնի, ալիւր աղա, քակիր զօսիդ, դէն զցիր սանդալներգ, քղանցքդ վեր քաշիր և գետի հունով անցիր: Քո ամօթը կրացուի, և մարդիկ կտեսնեն քո խայտառակութիւնը: Հեծկլտոցը կխորտակեն ատամներդ: Քո ոճագործութիւնների զարշահոտութիւնը ատեհի է Նախախնամութեան, Անիծեալ լինես, սատկիր ինչպէս շուն:

Փայտեայ դռնակը փակուեց. նրա վրայ դրեցին բրոնզեայ տախտակը: Մանսային պատրաստ էր խեզել Յովաքանաննեին:

Հերովդիաղան անհետացաւ: Փարիսեցիներն արտայայտում էին իրենց զայրոյթը: Անտիպան, նրանց մէջ կանգնած արդարանում էր:

—Ի հարկէ, ասաց Եղիազարը, Մովսիսական օրէնքով պէտք է ամուսնանալ եղբօր այբու վերայ, բայց Հերովդիաղան այրի չէր, և բացի այդ նա որդի ունի, և այդ պատճառով դու մեծ յանցանք գործեցիր:

—Ճշմարիտ չէ, ճշմարիտ չէ, հակածառեց սաղուկեցի Յովնաթանը, օրէնքը նման ամուսնութիւնը դատապարտում է, բայց անպայման չի արգելում:

—Թող այդպէս լինի, բայց և այնպէս զուք դէպի ինձ չափազանց անարդար էք, ասում էր Անտիպան. Արիսողում իւր հօր կանանց անկողինը մտաւ, Յուղան՝ իւր հարսի, Ամմօնը՝ իւր քրոջ, Ղովտը՝ իւր աղջկների:

Այդ ժամանակ երեաց Արդոսը, որ կարողացել էր լաւ քնիլ երբ նորան բացատրեցին բանի էութիւնը, նա խրախուսեց Տետրարխին: —Արգելքներ դնել մեզ վերայ այդպիսի յիմարութիւնների համար, ինչ անմոռութիւն է: Եւ նա զուարճացաւ Յովաքանաննի կատաղութեան և քահանաների յանդիմանութեան վերայ: Հերովդիաղան, որ կանգնած էր պալատի դաների մօտ, դարձաւ դէպի նա.

—Դու սիամբում ես, Տէր, նա հրամայում է ժողովրդին հարկ չվճարել:

—Այդ ճիշտ է, իսկոյն սկսեց հարցուփորձը հարկաժողովը: Համարեա բոլորը, նրանց թւում և Տետրարխը, դրական պատասխան առւին:

Բիթելիոսը վախենալով, որ բանարկեալ կարող է փախչէլ

և Անտիպային չվստահելով, հրամայեց պահապան կանգնեցնել դռների մօտ, պատերի վրայ և բակում:

Սուսանա գնաց իւր հանգստարանը քահանաներից ընտրուած-ների ուղեկցութեամբ. Նոքա յամառօրէն կպել էին նրանից իրենց գանգատներով, չխօսիլով զոհարերութեան մասին. Նա հրամայեց նոցա թողնել իրեն:

Հեռանալիս Յովլաթանը նկատեց Անտիպային սպանդանոցում, նա խօսում էր սպիտակազգեստ մի մարդու հետ, որ ունէր երկար մաղեր և յասենացի էր և նա ցաւեց, որ պաշտպանել էր Տետրարխին:

Տետրարխին մի բան էր մխիթարում. Յովլաթաննը այլ ևս նրանից չէր կախուած, Հոռվմայեցիներն էին պահպանում նրան. Որպիսի թեթեութեամբ հոգւոց հանեց:

Փանուէլին նկատելով, որը ման էր գալիս ամրոցի պատերի շուրջը, Անտիպան կանչեց նրան և ցոյց տալով զինուորաներին, ասաց.

— Նոքա ինձնից ուժեղ են. Ես նրան չեմ կարող ազատել, որանում ես մեղաւոր չեմ:

Բակը դատարկ էր: Մարուկները հանգստանում էին: Հորիշ զոնի վրայ վառում էր վերջալոյսը և ամենամանը կախված առարկաները պարզ նկարուել էին մութ գծերով երկնքի բոցավառուած ֆօնի վերայ: Անտիպան տեսնում էր Մեռեալ ծովի միւս կողմը աղագործարանները, բայց արարական վրանները չկային. արարները երկի հեռացել էին:

Դուրս եկաւ լուսինը և նրանից խաղաղութիւն իջաւ ցած:

Փանուէլը վշտահար, անշարժ, գլխիկոր կանգնած էր: Վերշապէս նա բացաւ Հերովդէսին իւր գաղտնիքը:

Այս ամբողջ ամիսը նա նայում էր գիշերները երկնքին. Հերսէա համաստեղութիւնը գանւում էր զէնիթում: Աֆալան համարեա չէր երևում, Ալգոլը աղօտ էր, Միրա-կէտին՝ անհետացել, այս բոլոր նշանները ցոյց էին տալիս, որ հէնց այս գիշեր Մարտերուսում պիտի մեռնի մի մեծ մարդ:

Դա մի կարող էր լինել: Բիթելիոսը շրջապատուած էր պահպաններով, Յովլաթաննին չէին մտածում սպանել. Ուրիմնդա ես եմ, մտածում էր Տետրարխի:

Արդուք արարները չե՞ն պատրաստում կըկնել իրանց արշաւանքը: Արդեօք Բիթելիոսը չի իմացել իւր յարաբերութիւնը պարթեների հետ: Բայց գուցէ երուսաղէմից քահանաների հետ եկել են վարձկան մարդասպաններ, սուրը հագուստի մէջ թագցրած: Տետրարխը չէր կասկածում, որ աստղալից երկնքի դադունիքը բաց է Փանուէլի համար:

Նա մտածեց Հերովդիադայի խորհրդին դիմել. ճիշդ է, նա առում էր այդ կնոջը, բայց նա իրեն կարող էր սիրո տալ, բացի այդ, նա դեռ բոլորովին չէր ազատուած Հերովդիադայի հմայքից, որով նա մի ժամանակ գերել էր իրեն, եթե Անտիպան մտաւ նրա սենեակները, այնուեղ ծխում էր կինամոմոն մեծ պորփիւրէ ամանի մէջ, չորս կողմ ցրուած էին ամպերի նման թեթևու ու սպիտակ գործուածքներ, փոշի, անուշահոս իւղեր, ժամսեակներ, փետուրից թեթև:

Նա Փանուէլի մարդարէութեան մասին ոչինչ չասաց, նաև այն վատանգների մասին, որ նրա մէջ ծնեցնում էին հրեաներն ու արարները, Հերովդիադան կմեղադրէր իրեն վախկոտութեան մէջ: Նա խօսում էր միայն հռովմայեցիների մասին. Բիթելիոսը իւր պատերազմական ծրագիրը չէր հազորդել իրեն, և Անտիպան հնաթագում էր, որ պրօկոնսուլը Կայոսի բարեկամն է, որին այցելում էր Ազրիապան. ապա կարող էին իրեն աքսորել կամ մորթել:

Հերովդիադան խօսում էր նրա հետ արհամարհոս զիջողութեամբ, աշխատելով նրան հանգստացնել: Վերջապէս նա փոքրիկ արկղի միջից հանեց սքանչելի մեղալ, որի վերայ նկարուած էր Տիրերիոս կայսեր կիսադէմքը, բաւական էր այդ ցոյց տալ, որ գունատուէին ծառաները և ժխտուէր ամեն տեսակ մեղադրանք:

Զգածուած Անտիպան հարցրեց, ի՞նչպէս է նա ձեռք բերել այդ մեղալը:

—Ինձ ընծայել են, պատասխանեց Հերովդիադան:

Սիդ ըստէին թեթև կերպով բարձրացնելով վարագոյրը, որ կախուած էր նրանց զիմաց, երեաց մերկ ձեռք, ջահիւ սքանչելի ձեռք, կարծես քանդակագործ Պոլիկլէտի փղոսկրից քանդակածը լինէր. մի քիչ ոչ ճարպիկ, բայց սիրուն շարժում էր օդի մէջ աշխատելով վերցնել տունիկը, որ մնացել էր պատի մօտ նստարանի վերայ:

Մի պառաւ զգուշաբար վարագոյրը յետ տանելով, տուեց նրան:

Տեսրարիսը յանկարծ աղօտ կերպով ինչ որ բան յիշեց:

—Սա քո ստրկուհին է:

—Իսկ քեզ ի՞նչ, պատասխանեց Հերովդիադան:

(Նաբունակիլի)

